



ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ



ՀՀ ՊՆ II
ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍ

ք. Գավառ

07. 02. 2014թ.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը՝ ի դեմս մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի, Գավառի պետական համալսարանը՝ ի դեմս ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի, և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Երկրորդ քանակային կորպուսը՝ ի դեմս կորպուսի հրամանատար, կայազորի պետ, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանի (այսուհետ՝ «Կողմեր»)

1) ընդունելով և կարևորելով.

- Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության,
- ազգային անվտանգության ու պաշտպանունակության,
- տարածքային ամբողջականության,
- սահմանների անձեռնմխելիության,
- պետական և ազգային արժեքների պաշտպանության,
- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի սոցիալ-մշակութային զարգացման ռազմավարական նշանակությունը.

2) ելնելով.

- ❖ Գեղարքունիքի մարզպետարան - Գավառի պետական համալսարան արդյունավետ համագործակցության ապահովման,
- ❖ տարածքային կառավարման մարմին - համալսարան - քանակ փոխգործակցության ակտիվացման,
- ❖ համատեղ ուժերով Գավառի պետական համալսարանի ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովման,

❖ ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի զինծառայողների համար կրթական, տեղեկատվական, ճանաչողական, մշակութային ծրագրերի իրականացման,

❖ Համալսարանի ուսանողներին զինվորական ծառայության նախապատրաստման անհրաժեշտությունից,

3) կնքում են Համագործակցության Հուշագիր՝ հետևյալի մասին.

1. հաստատել փոխշահավետ և բազմաբնույթ համագործակցային հարաբերություններ,
2. պայմաններ ստեղծել ՀՀ Գեղարքունիքի մարզում կրթական, դաստիարակչական, սոցիալ - մշակութային ծրագրերի համատեղ իրականացման համար,
3. համատեղ ուժերով նպաստել ուսանողների և զինծառայողների հայրենասիրական ոգու բարձրացմանը,
4. նպաստել ուսանողների և զինծառայողների հայրենաճանաչությանը, ծննդավայրի պատմամշակութային արժեքների բացահայտմանը,
5. խրախուսել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատանքներում ըստ անհրաժեշտության որպես կամավորներ ուսանողների ներգրավմանը,
6. համալսարանի դասախոսներին և ուսանողներին մասնակից դարձնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի իրականացրած սոցիալ - մշակութային միջոցառումներին,
7. մինչև զորակոչվելը ուսանողներին ծանոթացնել զինվորական ծառայության սկզբունքներին, գործող կարգապահական կանոններին, զինծառայողներին ներկայացվող հիմնական պահանջներին,
8. համալսարանի դասախոսների ուժերով երկրորդ բանակային կորպուսի զինծառայողների համար զորամասերում կազմակերպել բաց դասեր,
9. երկրորդ բանակային կորպուսի հրամանատարական կազմի ուժերով ուսանողների համար կազմակերպել դասախոսություններ ռազմահայրենասիրական թեմաներով,
10. կազմակերպել ուսանողների այցելություններ զորամասեր և զինծառայողների փոխայցելություն համալսարան,
11. ուսումնական նպատակներով՝ թույլատրելի սահմաններում, օգտագործել երկրորդ բանակային կորպուսին պատկանող ենթակառուցվածքները,
12. «Քաղաքացիական պաշտպանություն», «Արտակարգ իրավիճակներում առաջին բժշկական օգնություն» և հարակից դասընթացների գործնական պարապմունքներն անցկացնել երկրորդ բանակային կորպուսի զորամասերում, հրաձգարաններում,

13. համալսարանի ուսանողների պրակտիկան անցկացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում,
 14. երիտասարդությանը հուզող թեմաներով ուսանողների և մարզպետարանի աշխատակազմի համատեղ ուժերով կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, «կլոր սեղաններ»,
 15. ուսանողների և զինծառայողների մեջ արմատավորել հարգալից վերաբերմունք մայրենի լեզվի, հայ ժողովրդի նյութական և հոգևոր ժառանգության, ՀՀ օրենքների, պետական խորհրդանիշների նկատմամբ,
 16. ուսանողների և զինծառայողների շրջանում ծավալել շարունակական քարոզչական գործունեություն՝ ուղղված գիտելիքի և որակյալ կրթության՝ որպես անձի կայացման կարևոր գործոնների արժևորմանը,
 17. ուսանողների և զինծառայողների ուժերով կազմակերպել Բանակի օրվան, Անկախության տոնին, Հանրապետության օրվան և այլ տոնական օրերին ու պետական իրադարձություններին նվիրված միջոցառումներ,
 18. կազմակերպել ուսանողների և զինծառայողների համատեղ էքսկուրսիաներ, ուխտագնացություններ և արշավներ դեպի Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմամշակութային վայրեր:
- 4) Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է լրացվել ու փոփոխվել Կողմերի համաձայնությամբ:

Կողմեր՝

Գավառի պետական
համալսարան

ՀՀ Գեղարքունիքի
մարզպետարան

Երկրորդ բանակային կորպուս

Ոնկտոր՝

Ռ. Հակոբյան Մարզպետ՝

Ռ. Գրիգորյան

Հրամանատար,

գեներալ-մայոր՝

Պ. Պողոսյան

